ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Իմմունոֆարմ ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/48 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Ռամանյան մոդուլով համալրված ինֆրակարմիր (ԻԿ) տիրույթի Ֆուրիեի սպեկտրոմետր	IS 50 R FTIR Spectrometer with IS 50 Raman Module	IS 50 R FTIR Spectrometer with IS 50 Raman Module	Thermo Fisher USA	Գիտական սպեկտրաչափ՝ լիարժեք ժամանակային կախվածության չափումների հնարավորությամբ, ներառյալ քայլ առ քայլ սկանավորման, ամպլիդուդային, փուլային և բազմակի մոդուլյացիայի ռեժիմներ: Սպեկտրաչափը պետք է լինի լավ փակված և չոր, հագեցած լինի ազոտի շիթի միացման մոդուլով առանց ջրային գոլորշիների հետազոտությունների համար: Ներառում է օգտագործողի կողմից փոխարինվող հելիում նեոնային լազերային աղբյուր, կրկնակի կանալով թվայնացնող համակարգ՝

						ժամանակային սպեկտրասկոպիկ հետազոտություններ իրականացնելու համար (չափման նվազագույն ժամանակահատվածը՝ ոչ ավել քան, 1 միկրովարկյան)։ Գիտական ԻԿ ֆուրիե սպեկտրոմետրը ապահովում է գրանցման օպտիկական սպեկտրալ տիրույթ ոչ պակաս, քան 11000-50 սմ-1 (մինչև 27 000 – 15 սմ-1 սպեկտրալ տիրույթի ընդլայմնան հնարավորությամբ)՝ օգտագործելով համապատասխան լուսաբաժանիչներ՝ կալցիումի ֆտորիդ (11000-1000 սմ-1), գերմանիում-կալիումի բրոմիդ (7800 - 350 սմ-1) և պինդ սուբստրատի (700 - 50 սմ-1)։ ՈՒնի ծրագրային կառավարմամբ լուսաբաժանիչների ավտոմատ փոխարինման համակարգ, առանց ազոտի շիթի ընդհատման, հաջորդաբար բոլոր 3 սպեկտրալ տիրույթներում (մոտ,միջին և հեռու ինֆրակարմիր) չափումների համար։ Ազդանշան/աղմուկ հարաբերությունը ոչ քիչ քան 55000:1 Սպեկտրալ լուծողականությունը մինչև 0.09

						սմ-1 կամ ավելի Ալիքի երկարության որոշման ճշտությունը ոչ վատ, քան 0.005 սմ-1, առանց ծրագրային միջամտության: Սկանավորման արագության փոփոխության տիրույթը ոչ պակաս քան 0.0063–8.86 սմ/վ: Արտաքին 4 օպտիկական մուտքերի առկայություն: Սպեկտրոմետրը ունի ոչ պակաս 5 լրացուցիչ մոդուլներ տեղադրելու հնարավորություն՝ ներառյալ ռամանյան սպեկտրոմետրի մոդուլ և ներկառուցված լրիվ ներքին անդրադարձման խախտմամբ կցորդ (ալմաստե բյուրեղով): Սպեկտրոմետրը ունի հետևյալ դետեկտորները ՝ Սնդիկ կադմիում տելուրային դետեկտոր (հեղուկ ազոտով սառեցվող, որը հնարավորութուն է տալիս կատարել ժամանակային բարձր լուծողականությամբ սպեկտրոսկոպիա, սպեկտրալ տիրույթը ոչ նեղ քան 11500 - 350 սմ-1, էլեմենտի չափը ոչ քիչ քան 1x1 մմ2), Դեյտերացված L-Ալանին տրիգլիցին սուլֆատային դետեկտոր (սպեկտրալ տիրույթը ոչ նեղ քան

						12500 - 350 սմ-1), Պինդ սուբստրատի դետեկտոր հեռակա ԻԿ տիրույթում (ոչ նեղ քան 700 - 50 սմ-1) հետազոտությունների համար: Համալրված է, առանց արտաքին միացումների, ռամանյան սպեկտրոմետրի մոդուլով, ներառում է 1064 նմ ալիքի երկարությամբ լազեր ոչ պակաս 500մՎտ հզորությամբ և ոչ ավել 50 միկրոն լազերային փնջի չափսերով: Ծրագրային ապահովման միջոցով տվյալների հավաքագրում՝ ոչ պակաս, քան 100 մմ x 150 մմ x 25 մմ (x, y, z) չափսերով նմուշի մակերեսից: Լազերի անվտանգության համակարգ դաս 1 (դռնակը բացելու դեպքում անջատվում է): Ներկառուցված տեսախցիկի առկայություն տվյալների արխիվացման և պահպանման ֆունկցիայով: Նմուշի չափսերի տրամաչափման հնարավորություն: Հոսանքի սնուցումը ԻԿ սպեկտրաչափի միջոցով: Պետք է ունենա ներկառուցված լրիվ ներքին անդրադարձման խախտմամբ կցորդ (ադամանդե մոնոբյուրեղով),

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ИММУНОФАРМ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/48 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					ծրագրային ակտիվացմամբ, սպեկտրալ միջակայքը ոչ նեղ քան 5000-100 սմ-1, բարձր ճնշման դիմակայությամբ, մինչև 200 0C տաքացման հնարավորությամբ, վալիդացիայի առկայությամբ: Էմիսիոն ճառագայթման գրանցման համար, գործարանային ներկառուցված օպտիկական ճառագայթի ներմուծման համակարգ: Համակարգը թույլ է տալիս կատարել բարձր լուծողականությամբ ժամանակային չափումներ: Ներկառուցված, ծրագրային կառավարմամբ, բևեռացուցիչի հանգույցի առկայություն: Հայելային անդրադարձման գրանցման կցորդ, ամբողջական ծրագրային կառավարմամբ, համապատասխան հավելյալ բևեռացուցիչներով (տիրույթը ոչ նեղ քան 7800-50 սմ-1): Դիֆուզային ցրման սպեկտրալ չափումների կցորդ փոշի նմուշների հետազոտությունների համար(տիրույթը ոչ նեղ քան 4000-400 սմ-1): Պինդ և հեղուկ նյութերի նմուշապատրաստման հավաքածու ներառյալ կալիումի

						բրոմիդի պատուհաններ , ձեռքի մամլիչ, հեղուկների համար կյուվետաներ: Ծրագրային ապահովում. ողջ համակարգը, ներառյալ կցորդիչները, պետք է կառավարվեն և ինքնաախտորոշվեն մեկ ծրագրային համակարգով: Ծրագիրը համապատասխանում է 21 CFR Part 11 պահանջներին, օգտատերերի կառվարման համակարգով, ունի ավտոմատացված տվյալների դուրս բերման հնարավորություն: Ընդգրկում է հետևյալ վերլուծական գործիքները՝ բազմաբաղադրիչ որոնման հնարավորություն (մինչև 4 բաղադրիչ մեկ խառնուրդում), ATR շտկում, բազային գծի ուղղում և պիկերի նույնականացում: Սպեկտրալ գրադարանների առկայություն՝ ստանդարտ գրադարան առնվազն 10,000 ԻԿ սպեկտրներով (պոլիմերներ, օրգանական և անօրգանական միացություններ, հավելանյութեր), Ռամանյան սպեկտրերի գրադարան ոչ քիչ քան 1000 սպեկտր, Հավելյալ ԻԿ սպեկտրերի գրադարան ոչ քիչ քան 4000 սպեկտր:

					Համակարգչային պահանջներ՝ նվազագույնը Intel i7 պրոցեսոր, 32 GB RAM, 1000 GB SSD, լիցենզիոն Windows 10/11 (64-bit), վալիդացված գրաֆիկական քարտ, մոնիտոր 27 դույմ բարձր լուծողականությամբ առնվազն FHD (1920 x 1080), տպիչ լազերային։ Համակարգի տեղադրում, կարգաբերում և որակավորում սերտիֆիկացված ինժեների կողմից։ Թաղանթների չափման մեթոդաբանության ներդրում՝ ներառյալ աքսեսուարներ։ Երաշխիքային ժամկետը՝ մեկ տարի։